

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/8

1 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գայանե Քորոլանյանի 02.11.2015 թ-ի գանգատը հսկիչ-դրամարկղային մեքենա թյուրիմացաբար սխալ մուտքագրված գումարը որպես իրացման շրջանառություն չհաշվարկելու վերաբերյալ:

Ա/Ձ Գայանե Քորոլանյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Գայանե Քորոլանյանը հայտնում է, որ 23.07.2015 թ-ին սխալմամբ տպել է 35902430 դրամ, սակայն նշված սխալը նկատել է միայն եռամսյակային հաշվետվության կազմման ժամանակ: Պահպանվել է օրվա ֆիսկալային հաշվետվությունը:

Տեղի ունեցած թյուրիմացությանը լուծում տալու խնդրանքով Ա/Ձ Գայանե Քորոլանյանը դիմել է Գյումրու ՏՀՏ, սակայն խնդրանքը մերժվել է:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Գայանե Քորոլանյանը խնդրում է հարցին տալ լուծում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Գայանե Քորոլանյանը 23.07.2015 թ-ին սխալմամբ հսկիչ-դրամարկղային մեքենա է մուտքագրել 35902430 դրամ, սակայն տեղի ունեցած թյուրիմացության մասին Ա/Ձ Գայանե Քորոլանյանը տեղեկացել է միայն եռամսյակային հաշվետվությունը կազմելու ժամանակ: Արդյունքում, Ա/Ձ Գայանե Քորոլանյանը չի կարողացել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով և ժամկետում լուծել առաջացած խնդիրը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն. «Դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում, եթե սխալը հայտնաբերվել է գնման կտրոնի փակումից հետո մինչև օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումը, ապա սխալ գրանցումից անմիջապես հետո սխալ գումարով տպված կտրոնի հիման վրա լրացվում է գումարների՝ սխալմամբ գրանցման ակտը՝ համաձայն N 6 ձևի, և ՀԴՄ-ի միջոցով կատարվում է վերադարձ՝ տպվելով վերադարձի կտրոն: Այն դեպքում, երբ սխալը հայտնաբերվել է օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է սխալմամբ գրանցված գումարների ակտը. տվյալ դեպքում վերադարձի կտրոն չի տպվում.

...

7) կազմակերպությունները, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ՝ յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանք՝ համաձայն N 7 ձևի.»::

Քննարկվող դեպքում Ա/Ձ Գայանե Քորոլյանյանի կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով նախատեսված ընթացակարգը, քանի որ սխալմամբ մուտքագրված գումարի գրանցման մասին տեղեկացել է միայն եռամսյակային հաշվետվությունը կազմելու ժամանակ:

Միևնույն ժամանակ, Ա/Ձ Գայանե Քորոլյանյանի կողմից 35.902.430 դրամ գումարը սխալմամբ մուտքագրված լինելու մասին է վկայում այն հանգամանքը, որ նրա կողմից շահագործվող խանութում ապրանքային մնացորդը չի գերազանցում 1.200.000 դրամը, իսկ ամսեկան շրջանառությունը՝ 600.000 դրամը:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Ա/Ձ Գայանե Քորոլյանյանի կողմից 35.902.430 դրամը մուտքագրվել է թյուրիմացաբար, այն մեխանիկական սխալի արդյունք է, հետևապես սխալմամբ մուտքագրված գումարի մասին ուշ տեղեկանալը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով այդ մասին արձագանքելու ժամկետի բաց թողնվելը, ըստ էության, չեն կարող հիմք հանդիսանալ վերոգրյալ գումարը Ա/Ձ Գայանե Քորոլյանյանի իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ ներառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ա/Ձ Գայանե Քորոլյանյանի 02.11.2015 թ-ի գանգառը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**